

Զ. Կերակրէն վերջը պէտք չէ մէ-
կէն բազիք երթալ ու լուացուիլ.
ինչուան իրեք չորս ժամ պէտք է ըս-
պասել, որ կերակուրը մարսուի. ան-
կէ առաջ թէ որ մէկը բաղնիք եր-
թայ՝ ջուր մտնէ, մէկէն անմարսողու-
թիւն կ'ունենայ :

Է. Պէտք չէ առանց հարկաւորու-
թեան սովորութիւն ընել որոշած
ատեն մը արիւն, կամ մաքրողական
ու փսխեցուցիչ դեղեր առնելու. վասն
զի թէ որ մէկը մէյ մը սովորութիւն
ընէ, թողուլը վնասակար կ'ըլլայ. ան-
կէ շատ աս վնասն ալ ունի որ դեղե-
րը քիչ օգուտ կ'ընեն՝ սովորական ըլ-
լալուն պատճառաւ, որովհարկաւոր
եղած ատենն ալ օգուտ մը չեն ը-
ներ :

Ը. Ոմանք ծուռ ու վնասակար կար-
ծիք մը ունին թէ ամէն հիւանդու-
թիւններու դեղ է շատ քրտնիլը :
Իայց չափազանց քրտնիլը աւելի կը
վնասէ քան թէ օգուտ կ'ընէ :

Թ. Պէտք չէ ամենեին առանց
բժշկին հարցընելու խարան՝ մը գո-
ցել, կամ խարանագեղ՝ մը և կամ
հին վէրք մը ըրանեցընելով չորցը-
նել. վասն զի շատ վնասակար է:

Ժ. Հանկարծական մեծ ուրախու-
թէնէ մը, և կամ գէշ լուրէ մը
կրնայ մարդ ինչուան յանկարծ մեռ-
նիլ. աս բանս գիտնալով, պէտք է
այսպիսի բաները վարպետութեամբ
ու կամաց կամաց իմացընել. բայց
մամնաւոր կերպով գիտելու բան է
որ կերակրէն ետքը ըլլայ. նոյնպէս
գիտելու է որ աւելի զգուշութեամբ
իմաց տրուին այսպիսի լուրերը հի-
ւանդաց որ նոր առողջացեր են, և ա-
նոնց որ ջղաց տկարութիւն ունին :

ԺԱ. Պէտք չէ ուրիշը վախցընել,
մանաւանդ տղաքը, որոնց կազմուած-
քը տկար ըլլալով մէկէն կ'այլային :
Ո ասն զի վախէն շատ տեսակ հիւան-
դութիւններ առաջ կուգան, ինչպէս
ջերմ, ջղացաւութիւն, դող, վերնո-

տութիւն¹. և այնպիսի մարդիկ բո-
լոր իրենց կեանքին մէջ ապուշ² կը-
մնան :

ՕԴՏԱԿԱՐ ԳԻՒՏ

Դ բան մէտանի առողջարար յատկութիւն-
ներուն վրայ :

Գ ՈՒՐԸ այնչափ առողջարար յատ-
կութիւններ ունի որ հին ատենէ՝ ի
վեր ձանցուած է, և տաք կամ գաղջ
և կամ պաղ ջրով լուացուիլը ամէն
տեղ խիստ հարկաւոր ու օգտակար
դեղսեպուած է, մանաւանդ արևելք:
Խւրոպային մէջ աս տարիներս ջրով
բժշկութիւնընելընորելուք սովորու-
թիւններուն մէկն եղած է, որ ջրա-
բուժութիւն՝ ալ կ'ըսուի. և զարմա-
նալին ան է որ շատ բժիշկներ ա-
մէն տեսակ արտաքին հիւանդութեց
դեղ կըսեպեն պաղ ջրով լուացուի-
լը, շատ մարդիկ ալ համարձակ կը
գործածեն աս ամենադիւրին դեղը :
Ունք աս բանիս ստուժութեանը ե-
րաշխաւոր ըլլալով, հոս միայն ջրով
վէրք բժշկելու հնարքին վրայ խօ-
սինք, որ շատ հաւանական է թէ օգ-
տակար բան ըլլայ :

Հասարակ ժողովրդեան մէջ կար-
ծիք մը կայ թէ որ և իցէ վէրքի կամ
կտրուածքի կամ այրուքի ամենեին
ջուր պիտի չդրապի. անոր համար գրե-
թէ կաւ չմնար՝ եղ չմնարոր վէրքերու
վրայ չդնեն, և հիւանդին ոչ վէրքը կը
լուան, ոչ ձեռուըները և ոչ երեսը,
թէպէտ և աղտոտ ըլլայ : Լուիկայ նա-
խապաշարմունք մըն է որ հիւանդին
նոր նեղութիւն չտալու մտքով ունե-
ցածնեղութիւնը կ'աւելցընէ ու կ'եր-
կընցընէ :

Լ յայտնի է որ եթէ կտրուածք
մը կամ վէրք մը սաստիկ ըլլայ, ու

1 Թարթարէտ, Կէլ-էւ : 3 Գ. Հ. Hydropathie.


2 Պէտք :

արիւնը խիստ առատ վազելով չդադրի, պէտք է վիրաբոյժ կանչել։ Ի՞այց հասարակ վէրքերու ատեն՝ կամ գէթինչուան որ բժիշկը հասնի, պէտք է բրդեղէնի կտոր մը պաղ ջրի մէջ թաթխել ու վէրքին վրայ դնել, ու րով մէկէն կը զովանայ վէրքը. և քանի որ ան լաթը տաքնայ՝ նորէն պէտք է պաղ ջրին մէջ թաթխել ու դնել վէրքին վրայ։ Խակթէ որ մէկուն ձեռքը կամ մատը կամ ստքը ձզմուի կամ ուռի, ջրին մէջ քիչ մը քացախ կամ աղ ալ կրնայ խառնուիլ, որ ուժը աւելի ըլլայ։ Խրբոր մէկուն թեւը կամ

ոտքը կամ որ և իցէ ոսկորը դիպուածով մը կոտրի կամ խախտի՝ մէկէն պէտք է վիրաբոյժ կանչել. բայց որ պէս զի ան միջոցին վէրքը կամ ու ռեցքը կամ թէ կտրուած տեղը բորբոքումն չպատճառէ, շատ աղէկ կ'ըլլայ պաղ ջրով թրջել ատեն ատեն. անով տաքութիւն կըզովանայ, ցան ալ կը մեղմանայ։ Ամանապէս երբոր տղոց ձեռուըները, ոտուըները ձմեռ ատեն կը ձաթը ըստին ու ձմեռնակ կ'ըլլան, գաղջ ջրով թրջելը խիստ աղէկ է. վասն զի եռքը անով կը դադրի, ու վէրքը չզայրանար։

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼՈՒՔ

ՀԱՅԱԽՈՍՈՒԹԻՒՆ



Խաղսամալուի էռապուանը։

ԵԳԻՊԵՏՈՍԻ ՎԵՐԻ ԿՈՂՄԵՐԸ, ԱՄՈՒՐԻՆ ԱՌԱՋԻԱ ըստուած գաւառը, ուր որ հիմա խեղջ Արաբացիներ կը բնակին ողորմելի գեղերու մէջ, այնպիսի

մեծագործ հին շէնքեր կան որ տեսնողին միտքը կը յափշտակուի, ու անմեծագործութեանց վրայ նայելու ատեն ինքզինքը երկու իրեք հազար